Հավելված 5

«ԷԱՃԱՊՁԲ ԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/3 »* ծածկագրով

էլեկտրոնային աճուրդի հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/3-4

ք. Երևան ____/_____/2023թ.

« ՀՀ Արարատի մարզ Մասիսի համայնքապետարան »-ը ի դեմս Դավիթ Համբարձումյան ի, որը գործում է « ՀՀ Արարատի մարզ Մասիսի համայնքապետարան »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և « Ռուզ-Մարտի ՍՊԸ »-ը, ի դեմս տնօրեն Ռուզաննա Մարտիրոսյան ի, որը գործում է « Ռուզ-Մարտի ՍՊԸ »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար։ Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով։

2. **ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի։

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

* *լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից մինչև հրավերը հրապարակելը:*

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից

պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ձնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին

հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները։

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը։

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները։

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը։

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները։

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը։

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով։

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում։

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք։

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր։

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը։

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում

տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը։

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը։

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը։

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները։

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին։

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 4838502.56 AMD(չորս միլիոն ութ հարյուր երեսունութ հազար հինգ հարյուր երկուդրամիիսունվեցլումա) ՀՀ դրամ , ներառյալ ԱԱՀ-ն։[629][1]

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը։

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը։

730[2]

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով։ Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին։ Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային

օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

-

4. **ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ**

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված ____ օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

8 31[3]

5. **ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ**

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով

Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. **ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի *0,05* (*զրո ամբողջ հինգ հարյուրերորդական*) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի *0,5* (*զրո ամբողջ հինգ տասնորդական*) տոկոսի չափով:[9] [3][4]Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի *0,05* (*զրո ամբողջ հինգ հարյուրերորդական*) տոկոսի չափով։

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով։

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց։

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել։ Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը։ Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին։

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը։

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը [5]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ

պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության։ Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության։

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար։ Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է։

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում։

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը։

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման։

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը։

11[6]

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե

մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են։

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա։ Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը։

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով։

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն

հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ։ Պայմանագրի N 1, N 2, N 3,N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը։

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը։

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

10. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
ՀՀ Արարատի մարզ Մասիսի համայնքապետարան	**Ռուզ-Մարտի ՍՊԸ**
	ք. Մասիս, ն/թ 6շ. բն40
Արարատի մարզ քաղաք Մասիս	**Արդշինբանկ Մասիս մ/ճ**
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	**2472900892800010**
900432000348	**03810239**

MARTIROSYAN HARUTYUN 2804820025
Digitally signed by MARTIROSYAN HARUTYUN 2804820025
Date: 2023.01.13 19:55:43 AMT

04240324

/ստորագրություն/

Digitally signed by HAMBARDZUMYAN DAVIT 1708860835
Date: 2023.01.16 11:19:36 MUT

/ստորագրություն/

Կ.Տ

Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ։

[1]29 6 *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

[2]30 7 *Վաճառողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Գնորդի և Վաճառողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:*

[3]31 8 *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

[4]9 *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[5]10 *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

[6]11 *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[7]12 *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

[8]13 *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի*

տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումներ» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Հավելված N 1
____/_____/2023թ. կնքված
ԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/3 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ դրամ

Ապրանքի				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, ֆիրմայի անվանում*	տեխնիկական բնութագիրը
7	15421100/9	ար—ածաղկի ձեթ, ռաֆինացված, (զտած)	Սովետսկոյե, Կրասնադարսկոյե, Մասլեննիցա և այլն, Սովետսկոյե, Կրասնադարսկոյե, Մասլեննիցա և այլն	Պատրաստված արևածաղկի սերմերի լուծամզման և ճզմման եղանակով, բարձր որակի, զտված, հոտազերծված, 1 լանոց տարրաներով: ԳՕՍՏ 1129-93: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Կցված է 650aa337.rar
9	15112160/16	հավի մսեղիք, սառեցված	Լուսակերտ, Նուբարաշենի թռչնաֆաբրիկա և այլն, Լուսակերտ, Նուբարաշենի	Հավի միս ամբողջական, թարմ, առանց փորոտիքի, Մաքուր, արյունազրկված, առանց կողմնակի հոտերի, չսառեցված /չհասցրաց 0 աստիճանից ցածր ջերմաստիճանի/,

			թռչնաֆաբրիկա և այլն	գործարանային փաթեթավորմամբ, ԳՕՍՏ 25391-82: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Տեղական կամ համարժեք: Կցված է 0a39fabd.rar
13	15614200/9	բրինձ երկարավուն	ԳՈՌՆԱՐԵ, ՊՐԵՄԻՈՒՄ ՖՈՒԴ, ՊԼԵՆԻՈՒՄ և այլն, ԳՈՌՆԱՐԵ, ՊՐԵՄԻՈՒՄ ՖՈՒԴ, ՊԼԵՆԻՈՒՄ և այլն	բարձր որակ, սպիտակ բրինձ, հատիկների երկարությունը 1սմ, չկոտրած, լայնությունից բաժանվում են 1-ից մինչև 4 տիպերի, ըստ տիպերի խոնավությունը 13%-ից մինչև 15%, ԳՕՍՏ 6293-90: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառ. 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված , Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի. կեղտոտվածության աստիճանը ոչ ավել քան 1%: Կցված է 9e55145d.rar
14	15616000/9	հնդկաձավար	ԳՈՌՆԱՐԵ, ՊՐԵՄԻՈՒՄ ՖՈՒԴ, ՊԼԵՆԻՈՒՄ և այլն, ԳՈՌՆԱՐԵ, ՊՐԵՄԻՈՒՄ ՖՈՒԴ, ՊԼԵՆԻՈՒՄ և այլն	Մաքուր վիճակում, բարձր որակ, հնդկաձավար I տեսակի, խոնավությունը՝ 14,0 %-ից ոչ ավելի, հատիկները՝ 97,5 %-ից ոչ պակաս: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված «Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Կեղտոտվածության աստիճանը ոչ ավել քան 1%: Կցված է 472b9f23.rar
15	15617000/10	ցորենաձավար	ԳՈՌՆԱՐԵ, ՊՐԵՄԻՈՒՄ ՖՈՒԴ, ՊԼԵՆԻՈՒՄ և այլն, ԳՈՌՆԱՐԵ, ՊՐԵՄԻՈՒՄ ՖՈՒԴ,	Շուտ եփող, բարձր որակ, ցորենի հատիկները լինում են հղկված ծայրերով կամ հղկված կլոր հատիկների ձևով, խոնավությունը 14%-ից ոչ ավելի, աղբային խառնուկները 0,3%-ից ոչ ավելի,

			Պլենիում և այլն	անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված, «Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգիե և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Կցված է ebde3455.rar
16	03221117/15	ոլոռ	ԳոռՆարե, Պրեմիում ֆուդ, Պլենիում և այլն, ԳոռՆարե, Պրեմիում ֆուդ, Պլենիում և այլն	Չորացրած, կեղևաած, դեղին գույնի: Մաքուր վիճակում: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասինե ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: կեղտոտվածության աստիճանը ոչ ավել քան 1%: Կցված է e0a0b024.rar
17	15831000/15	շաքարավազ սպիտակ	Ալեքս Հոլդինգ և այլն, Ալեքս Հոլդինգ և այլն	Սպիտակ գույնի, սորուն, քաղցր, առանց կողմնակի համի և հոտի (ինչպես չոր վիճակում, այնպես էլ լուծույթում): Շաքարի լուծույթը պետք է լինի թափանցիկ, առանց չլուծված նստվածքի և կողմնակի խառնուկների, սախարոզի զանգվածային մասը՝ 99,75%-ից ոչ պակաս (չոր նյութի վրա հաշված), խոնավության զանգվածային մասը՝ 0,14%-ից ոչ ավել, ֆեռոխառնուկների զանգվածային մասը՝ 0,0003%-ից ոչ ավել, ԳOUS 21-94 կամ համարժեք: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Կցված է 7908b31f.rar
19	15333100/15	տոմատի մածուկ	ԱՊԳ, Թեսթի, Հարյենյանց Բարիքներ, Սպեց և այլն, ԱՊԳ, Թեսթի, Հարյենյանց Բարիքներ, Սպեց և այլն	Բարձր տեսակի, ապակյա և մետաղյա տարաներով, փաթեթավորումը՝ մինչև 10 դմ3 տարողությամբ ապակե կամ մետաղյա տարաներով, ԳOUS 3343-89 կամ համարժեքը: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի Կցված է 671729f1.rar
20	15863200/	թեյ, սև տե	Ջենիքս, Բոնթայմ և այլն,	Թեյ սև, տերևներով տուփերով, ԳOUS 1937-90 կամ ԳOUS1938-90:

	15	րևներով	Ջենիքս, Բոնթայմ և այլն	Անվտանգությունը՝ ըստ E112 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Կցված է 402e6b78.rar
21	15841100/15	կակաո	Էր-Մա, Ռոսիյա և այլն, Էր-Մա, Ռոսիյա և այլն	Խոնավությունը՝ 6.0 %-ից ոչ ավելի, pH-ը՝ 7.1-ից ոչ ավելի, դիսպերսությունը՝ 90.0 %-ից ոչ պակաս, փաթեթավորված թղթե տուփերում և մետաղյա կամ ապակե բանկաներում, ինչպես նաև ոչ կշռաբաժանված, ԳOUS 108-76, Անվտանգությունը և մակնշումը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Կցված է 1eaedf4a.rar
22	15842310/13	կոնֆետ, կարամել	Դարոինկ, Կառոլ, Յաշկինո և այլն, Դարոինկ, Կառոլ, Յաշկինո և այլն	"Կարամելային շոկոլադեպատ: Կակաո կաթի և կակաո յուղի պարունակությամբ: Թարմ, չպնդացած, կախված կոնֆետի տեսակից՝ խոնավության զանգվածային մասը՝ 4-25 %-ից, փաթեթավորումը՝ ստվարաթղթի մեջ, չփաթաթված՝ հատավոր, կշռածրարված տուփերով, խառը տեսականիով: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ “Սննդամթերքի անվտանգության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: " Կցված է 4f4f2b00.rar
24	03221111/8	սոխ	ՀՀ գյուղմթերք, ՀՀ գյուղմթերք	Ընտիր տեսակի, թարմ, կծու, կիսակծու կամ քաղցր, նեղ մասի տրամագիծը 3 սմ-ից ոչ պակաս, ԳOUS 27166-86: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի Կցված է f352a0a9.rar
28	03222121/9	մանդարին	գյուղմթերք, գյուղմթերք	Մանդարին թարմ, պտղաբանական II խմբի (71-ից փոքր մինչև 63մմ ներառյալ), ԳOUS 4427-82: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:: Ըստ սեզոնի՝հոկտեմբերից –դեկտեմբեր: Կցված է 91eecf8a.rar

29	03222100/9	բանան	գյուղմթերք, գյուղմթերք	Բանան թարմ, պտղաբանական II խմբի ԳOUS 4427-82: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:Ըստ սեզոնի՝սեպտեմբերից-դեկտեմբեր: Կցված է bd7d5709.rar
34	15332290/36	ջեմեր	Մելարկո, ՌագՄակ, Մեր այգին և այլն, Մելարկո, ՌագՄակ, Մեր այգին և այլն	Ջեմ՝ ծիրանի, 1-ին տեսակի ՀUS 48-2007: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի Կցված է ad2f7303.rar
35	15331151/36	լոբի, հատիկավոր	ԳոռՆարե, Պրեմիում ֆուդ, Պլենիում և այլն, ԳոռՆարե, Պրեմիում ֆուդ, Պլենիում և այլն	Լոբի կարմիր, գունավոր ցայտուն, չոր՝ խոնավությունը 15 %-ից ոչ ավելի կամ միջին չորությամբ՝ (15,1-18,0) %: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀօրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս 50 % Կցված է 0f1d40a5.rar
39	15871256/10	պղպեղ աղացած կարմիր	Էր-Մա և այլն, Էր-Մա և այլն	Չորացված պղպեղի փոշի, քաղցր, ընտիր կամ սովորական տեսակի: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի Կցված է c3553e29.rar
42	15618000/8	բլղուր	ԳոռՆարե, Պրեմիում ֆուդ, Պլենիում և այլն, ԳոռՆարե, Պրեմիում ֆուդ, Պլենիում և այլն	Ձավար ցորենի I, II և III տեսակի, ստացված ցորենի թեփահան հատիկների հղկմամբ, կամ հետագա կոտրատմամբ, ցորենի հատիկները լինում են հղկված ծայրերով կամ հղկված կլոր հատիկների ձևով, խոնավությունը 14%-ից ոչ ավելի, աղբային խառնուկները 0,3%-ից ոչ ավելի, պատրաստված բարձր և առաջին տեսակի ցորենից, ԳOUS 276-60: Մաքուր առանց աղբի:

				Անվտանգությունը՝ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Կցված է 3f7f3c23.rar
44	15623200/8	սպիտակաձավար	ԳոռՆարե, Պրեմիում ֆուդ, Պլենիում և այլն, ԳոռՆարե, Պրեմիում ֆուդ, Պլենիում և այլն	Մաքուր վիճակում, սåÇï³Ï³Ó³í³ñ I տեսակի, խոնավությունը՝ 14.0 %-ից ոչ ավելի, հատիկները՝ 97.5 %-ից ոչ պակաս, գործարանային պարկերով, ԳOUS 7022-97: Անվտանգությունը և մակնշումը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված, «Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգիե և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Գործարանային փաթեթավորված և արտադրողի կամ փաթեթավորողի մակնանշմամբ: Կցված է 93abddae.rar
50	15613350/7	վարսակի փաթիլներ	ԳոռՆարե, Պրեմիում ֆուդ, Պլենիում և այլն, ԳոռՆարե, Պրեմիում ֆուդ, Պլենիում և այլն	Վարսակի փաթիլներ, սպացված բարձր տեսակի վարսակաձավարից Առանց կողմնակի համի և հոտի:Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Կցված է 3fd22f73.rar
56	15511600/8	խտացրած կաթ	Սովետսկոյե, Սիմբա, Յոժիկ, Ռուս Լադա և այլն, Սովետսկոյե, Սիմբա, Յոժիկ, Ռուս Լադա և այլն	Անարատ կովի կաթից՝առանց բուսական յուղի պարունակության:Անխառն խտացրած կաթ/цельное сгущенное молоко/, 380գ-ից մինչև 1 կգ-անոց տարաներով/նախընտրելի է1կգ տարա/: Կցված է 6745d6ba.rar
57	15871257/19	համեմունքներ աղացած սև պղպեղ	Էր-Մա և այլն, Էր-Մա և այլն	Սննդում օգտագործվող համային հավելում: Չափածրարված, 5գ-անոց տուփերով, գործարանային արտադրության և փաթեթավորմամբ: ԳOUS 16599-71: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: Կցված է c77b286e.rar

58	03221124/8	վարունգ	ՀՀ գյուղմթերք, ՀՀ գյուղմթերք	Թարմ վիճակում, տեղական արտադրության: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: Ըստ սեզոնի՝հունիսից-հոկտեմբեր: Կցված է 33db4608.rar
59	15331139/8	լոլիկ	ՀՀ գյուղմթերք, ՀՀ գյուղմթերք	Թարմ վիճակում, տեղական արտադրության: Անվտանգությունն ըստ N2-III-4.9-01-2010հիգիենիկ նորմատիվների և ‹‹Սննդամթերքի անվտանգության մասին›› ՀՀօրենքի 9-րդ հոդվածի : Ըստ սեզոնի՝ հուլիսից -սեպտեմբեր: Կցված է 6aba7446.rar
60	15871256/11	պղպեղ	ՀՀ գյուղմթերք, ՀՀ գյուղմթերք	Թարմ վիճկում,ընտիր կամ սովորական տեսակի: Անվտանգությունը,փաթեթավորումը և մակնշումը՝ըստ ՀՀկառավարության 2006 թ. դեկտեմբերի 21-ի N 1913- Ն որոշմամբ հաստատված ‹‹Թարմ պտուղ –բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի›› և‹‹ Սննդամթերքի անվտանգության մասին ›› օրենքի: Ըստ սեզոնի՝հուլիսից-սեպտեմբեր: Կցված է 148432ce.rar
73	15821500/23	թխվածքաբլիթներ պրյանիկ	Դարոինկ, Կառոլ, Յաշկինո և այլն, Դարոինկ, Կառոլ, Յաշկինո և այլն	Կաթնահունց, շաքարահունց և երկարատև պատրաստված, խոնավությունը՝3%-ից մինչև 10%, շաքարի զանգվածային պարունակությունը՝ 20% -ից մինչև 27%, յուղայնությունը՝ 3%-ից մինչև 30%: ԳOUS15810-96: Անվտանգությունը և մակնշումը N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Կցված է c1776a1d.rar
74	15321000/5	մրգահյութ, պատրաստի օգտագործման բնական հյութ	Նատուրա, Մելարկո, Յան և այլն, Նատուրա, Մելարկո, Յան և այլն	Պատրաստի օգտագործման բնական հյութ, տեղական արտադրության: Հյութ, որը պատրաստվում է թարմ մրգերից և պտուղներից՝ ուղղակի մզման հյութ, կամ վերականգնված հյութ, որը պատրաստում են մրգերի և պտուղների խտացրած հյութից կամ խյուից: Հյութը պատրաստում են պարզեցված, չպարզեցված կամ պտղամսով: Արտաքին տեսքը պարզեցված հյութի՝

				թափանցիկ հեղուկի պահման ամբողջ ընթացքում, թույլատրվում է թեթև կոպալեսցենտում, թույլատրվում է նստվածքի առկայություն՝ ոչ ավել, քան 0,2% -ից: Չպարզեցված հյութի՝ բնական պղտոր հեղուկ (թափանցիկությունը պարտադիր չէ), թույլատրվում է տարայի հատակին նստվածքի առկայություն՝ ոչ ավելի 0,8%: Պտղամսի հյութի՝ համասեռ հեղուկ, հավասարաչափ տարածված մրգի պտղամսի մասնիկների առկայությամբ, թույլատրվում է տարայի հատակին աննշան նստվածքի առկայություն և թեթևակի շերտատում: ԳՕՍՏ Ռ 52184-2003, ԳՕՍՏ Ռ 52186-2003: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2009 թ. հունիսի 26-ի թիվ 744-Ն որոշմամբ հաստատված “Հյութերին և հյութամթերքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի”, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: Կցված է dfa66815.rar
75	15851100/18	մակարոն վերմիշել	Պետրովսկիյե Նիվի, Ցար, Մոյա Սեմյա և այլն, Պետրովսկիյե Նիվի, Ցար, Մոյա Սեմյա և այլն	Մակարոնեղեն անդրոժ խմորից, կախված ալյուրի տեսակից և որակից՝ A (պինդ ցորենի ալյուրից), Б (փափուկ ապակենման ցորենի ալյուրից), B (հացաթխման ցորենի ալյուրից), չափածրարված և առանց չափածրարման, ԳՕՍՏ 875-92 կամ համարժեք: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի Կցված է d9a1464a.rar
76	15851100/19	մակարոն լափշա	Պետրովսկիյե Նիվի, Ցար, Մոյա Սեմյա և այլն, Պետրովսկիյե Նիվի, Ցար, Մոյա Սեմյա և այլն	Մակարոնեղեն անդրոժ խմորից, կախված ալյուրի տեսակից և որակից՝ A (պինդ ցորենի ալյուրից), Б (փափուկ ապակենման ցորենի ալյուրից), B (հացաթխման ցորենի ալյուրից), չափածրարված և առանց չափածրարման, ԳՕՍՏ 875-92 կամ համարժեք: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի

				անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի Կցված է 7db85d62.rar
77	15332240/4	մրգային մարմելադ	Դարոինկ, Կառոլ, Յաշկինո և այլն, Դարոինկ, Կառոլ, Յաշկինո և այլն	Էներգետիկ արժեքը 100մլ-ում՝ 308կկալ/1309կՋ, Սննդային արժեքը 100մլ-ում՝ սպիտակուցներ՝ 0.1գ, ճարպեր՝ 0.1գ, ածխաջրեր՝ 76.7գ, Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի Կցված է d2ee82b1.rar
79	15332410/5	չիր սալորաչիր ծիրանաչիր	ՀՀ գյուղարտադրանք, ՀՀ գյուղարտադրանք	Գործարանային մշակման , պահպանված 5 C-ից մինչև 25 C ջերմաստիճանում 70 %-ից ոչ ավելի խոնավության պայմաններում: ԳOUS 28501-90: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: Կցված է c99f2dbc.rar
80	15842310/14	կոնֆետ, իրիս	Դարոինկ, Կառոլ, Յաշկինո և այլն, Դարոինկ, Կառոլ, Յաշկինո և այլն	Կախված կոնֆետի տեսակից՝ խոնավության զանգվածային մասը՝ 4-25 %-ից ոչ ավել, փաթեթավորումը՝ ստվարաթղթի մեջ, չփաթաթված՝ հատավոր, կշռածրարված տուփերով, խառը տեսականիով: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդհոդվածի: Կցված է d5143a6c.rar

* Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը » սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:

ԳՆՈՐԴ
ՀՀ Արարատի մարզ Մասիսի համայնքապետարան
Հասցե՝ Արարատի մարզ քաղաք Մասիս
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
900432000348
04240324

ՎԱՃԱՌՈՂ
Ռուզ-Մարտի ՍՊԸ
Հասցե՝ ք. Մասիս, ն/թ 6շ. բն40
Արդշինբանկ Մասիս մ/ճ
2472900892800010
03810239

Դավիթ Համբարձումյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Digitally signed by HAMBARDZUMYAN DAVIT 1708860835
Date: 2023.01.16 11:20:23 MUT

MARTIROSYAN HARUTYUN 2804820025

Ռուզաննա Մարտիրոսյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Digitally signed by MARTIROSYAN HARUTYUN 2804820025
Date: 2023.01.13 19:56:43 AMT

Հավելված N 2
____/_____/2023թ. կնքված
ԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/3 ծածկագրով պայմանագրի

ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
					հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
7	լիտր	801.92	166800.00	208	Ըստ պատվիրատուների հասցեների	208	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2023թ.
9	կիլոգրամ	1248.78	349659.60	280	Ըստ պատվիրատուների հասցեների	280	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2023թ.
13	կիլոգրամ	650.00	292500.00	450	Ըստ պատվիրատուների հասցեների	450	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2023թ.
14	կիլոգրամ	780.00	312000.00	400	Ըստ պատվիրատուների	400	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու

					հասցեների		օրվանից մինչև 30.06.2023թ.
15	կիլոգրամ	450.00	150750.00	335	Ըստ պատվիրատուների հասցեների	335	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2023թ.
16	կիլոգրամ	399.99	111999.99	280	Ըստ պատվիրատուների հասցեների	280	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2023թ.
17	կիլոգրամ	414.99	427449.99	1030	Ըստ պատվիրատուների հասցեների	1030	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2023թ.
19	կիլոգրամ	948.00	137460.00	145	Ըստ պատվիրատուների հասցեների	145	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2023թ.
20	կիլոգրամ	6550.00	78600.00	12	Ըստ պատվիրատուների հասցեների	12	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2023թ.
21	կիլոգրամ	4448.00	33360.00	7.5	Ըստ պատվիրատուների հասցեների	7,5	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2023թ.
22	կիլոգրամ	1749.99	222249.99	127	Ըստ պատվիրատուների հասցեների	127	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև

							30.06.2023թ.
24	կիլոգրամ	280.00	67200.00	240	Ըստ պատվիրատուների հասցեների	240	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2023թ.
28	կիլոգրամ	500.00	90000.00	180	Ըստ պատվիրատուների հասցեների	180	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2023թ.
29	կիլոգրամ	695.00	382250.00	550	Ըստ պատվիրատուների հասցեների	550	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2023թ.
34	կիլոգրամ	1335.00	273675.00	205	Ըստ պատվիրատուների հասցեների	205	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2023թ.
35	կիլոգրամ	138.46	126000.00	910	Ըստ պատվիրատուների հասցեների	910	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2023թ.
39	կիլոգրամ	3750.00	30000.00	8	Ըստ պատվիրատուների հասցեների	8	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2023թ.
42	կիլոգրամ	537.77	72600.00	135	Ըստ պատվիրատուների հասցեների	135	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2023թ.

44	կիլոգրամ	543.60	54360.00	100	Ըստ պատվիրատուների հասցեների	100	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2023թ.
50	կիլոգրամ	586.15	38100.00	65	Ըստ պատվիրատուների հասցեների	65	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2023թ.
56	կիլոգրամ	1642.57	287450.00	175	Ըստ պատվիրատուների հասցեների	175	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2023թ.
57	կիլոգրամ	5000.00	27500.00	5.5	Ըստ պատվիրատուների հասցեների	5,5	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2023թ.
58	կիլոգրամ	392.00	70560.00	180	Ըստ պատվիրատուների հասցեների	180	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2023թ.
59	կիլոգրամ	392.00	70560.00	180	Ըստ պատվիրատուների հասցեների	180	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2023թ.
60	կիլոգրամ	349.99	25899.99	74	Ըստ պատվիրատուների հասցեների	74	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2023թ.
73	կիլոգրամ	626.96	94044.00	150	Ըստ	150	Համաձայնագիրն

					պատվիրատուների հասցեների		ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2023թ.
74	լիտր	692.17	238800.00	345	Ըստ պատվիրատուների հասցեների	345	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2023թ.
75	կիլոգրամ	368.97	92244.00	250	Ըստ պատվիրատուների հասցեների	250	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2023թ.
76	կիլոգրամ	375.00	86250.00	230	Ըստ պատվիրատուների հասցեների	230	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2023թ.
77	կիլոգրամ	2225.45	122400.00	55	Ըստ պատվիրատուների հասցեների	55	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2023թ.
79	կիլոգրամ	4750.00	237500.00	50	Ըստ պատվիրատուների հասցեների	50	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2023թ.
80	կիլոգրամ	1950.85	68280.00	35	Ըստ պատվիրատուների հասցեների	35	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2023թ.

* Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի

իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ԳՆՈՐԴ

ՀՀ Արարատի մարզ Մասիսի համայնքապետարան

Հասցե՝ Արարատի մարզ քաղաք Մասիս

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

900432000348

04240324

Դավիթ Համբարձումյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Digitally signed by HAMBARDZUMYAN DAVIT 1708860835
Date: 2023.01.16 11:21:10 MUT

ՎԱՃԱՌՈՂ

Ռուզ-Մարտի ՍՊԸ

Հասցե՝ ք. Մասիս, ն/թ 6շ. բն40

Արդշինբանկ Մասիս մ/ճ

2472900892800010

03810239

Ռուզաննա Մարտիրոսյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

MARTIROSYAN HARUTYUN 2804820025

Digitally signed by MARTIROSYAN HARUTYUN 2804820025
Date: 2023.01.13 19:57:33 AMT

Հավելված N 3
____/_____/2023թ. կնքված
ԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/3 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			Հնվ.	Փտր.	Մրտ.	Ապր.	Մայ.	Հուն.	Հուլ.	Օգս.	Սեպ.	Հոկ.	Նոյ.	Դեկ.	Ընդամենը
7	15421100/9	ար—ածաղկի ձեթ, ռաֆինացված, (զտած)												166800.00	166800.00
9	15112160/16	հավի մսեղիք, սառեցված												349659.60	349659.60
13	15614200/9	բրինձ երկարավուն												292500.00	292500.00

14	15616000/9	հնդկաձավար												312000.00	312000.00
15	15617000/10	ցորենաձավար												150750.00	150750.00
16	03221117/15	ոլոռ												111999.99	111999.99
17	15831000/15	շաքարավազ սպիտակ												427449.99	427449.99
19	15333100/15	տոմատի մածուկ												137460.00	137460.00
20	15863200/15	թեյ, սև տերևներով												78600.00	78600.00
21	15841100/15	կակաո												33360.00	33360.00
22	15842310/13	կոնֆետ, կարամել												222249.99	222249.99
24	03221111/8	սոխ												67200.00	67200.00
28	03222121/9	մանդարին												90000.00	90000.00
29	03222100/9	բանան												382250.00	382250.00
34	15332290/36	ջեմեր												273675.00	273675.00
35	15331151/36	լոբի, հատիկավոր												126000.00	126000.00
39	15871256/10	պղպեղ աղացած կարմիր												30000.00	30000.00

42	15618000/8	բլղուր												72600.00	72600.00
44	15623200/8	սպիտակած ավար												54360.00	54360.00
50	15613350/7	վարսակի փաթիլներ												38100.00	38100.00
56	15511600/8	խտացրած կաթ												287450.00	287450.00
57	15871257/19	համեմունքներ աղացած սև պղպեղ												27500.00	27500.00
58	03221124/8	վարունգ												70560.00	70560.00
59	15331139/8	լոլիկ												70560.00	70560.00
60	15871256/11	պղպեղ												25899.99	25899.99
73	15821500/23	թխվածքաբլիթներ պրյանիկ												94044.00	94044.00
74	15321000/5	մրգահյութ, պատրաստի օգտագործման բնական հյութ												238800.00	238800.00
75	15851100/18	մակարոն վերմիշել												92244.00	92244.00
76	15851100/19	մակարոն լափշա												86250.00	86250.00

77	15332240/4	մրգային մարմելադ												122400.00	122400.00
79	15332410/5	չիր սալորաչիր ծիրանաչիր												237500.00	237500.00
80	15842310/14	կոնֆետ, իրիս												68280.00	68280.00

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ԳՆՈՐԴ

ՀՀ Արարատի մարզ Մասիսի համայնքապետարան

Հասցե՝ Արարատի մարզ քաղաք Մասիս

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

900432000348

04240324

Դավիթ Համբարձումյան

_____

/ստորագրություն/

Digitally signed by HAMBARDZUMYAN DAVIT 1708860835
Date: 2023.01.16 11:21:58 MUT

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

Ռուզ-Մարտի ՍՊԸ

Հասցե՝ ք. Մասիս, ն/թ 6շ. բն40

Արդշինբանկ Մասիս մ/ճ

2472900892800010

03810239

Ռուզաննա Մարտիրոսյան

MARTIROSYAN HARUTYUN 2804820025

Digitally signed by MARTIROSYAN HARUTYUN 2804820025
Date: 2023.01.13 19:58:16 AMT

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 4
____/_____/2023թ. կնքված
ԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/3 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«___» «____» 20___ թ.
Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20__թ.
Պայմանագրի համարը՝ ԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/3-4
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «_____» «_____» 20___թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
7	ար—ածաղկի ձեթ,							

	ռաֆինացված, (զտած)							
9	հավի մսեղիք, սառեցված							
13	բրինձ երկարավուն							
14	հնդկաձավար							
15	ցորենաձավար							
16	ոլոռ							
17	շաքարավազ սպիտակ							
19	տոմատի մածուկ							
20	թեյ, սև տերևներով							
21	կակաո							
22	կոնֆետ, կարամել							
24	սոխ							
28	մանդարին							
29	բանան							
34	ջեմեր							
35	լոբի, հատիկավոր							
39	պղպեղ աղացած կարմիր							
42	բլղուր							
44	սպիտակաձավար							
50	վարսակի փաթիլներ							
56	խտացրած կաթ							
57	համեմունքներ աղացած սև պղպեղ							
58	վարունգ							
59	լոլիկ							
60	պղպեղ							
73	թխվածքաբլիթներ պրյանիկ							
74	մրգահյութ,							

	պատրաստի օգտագործման բնական հյութ							
75	մակարոն վերմիշել							
76	մակարոն լափշա							
77	մրգային մարմելադ							
79	չիր սալորաչիր ծիրանաչիր							
80	կոնֆետ, իրիս							

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

_____

ստորագրություն

_____

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

_____

ստորագրություն

_____

ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված N 4.1
____/_____/2023թ. կնքված
ԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/3 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ Արարատի մարզ Մասիսի համայնքապետարան -ի (այսուհետ՝ Գնորդ) և Ռուզ-Մարտի ՍՊԸ (այսուհետ՝ Վաճառող)
միջև 20 թ._____ -ին կնքված N ԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/3-4
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով
Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)
ար—ածաղկի ձեթ, ռաֆինացված, (զտած)	լիտր	
հավի մսեղիք, սառեցված	կիլոգրամ	
բրինձ երկարավուն	կիլոգրամ	
հնդկաձավար	կիլոգրամ	
ցորենաձավար	կիլոգրամ	
ոլոռ	կիլոգրամ	
շաքարավազ սպիտակ	կիլոգրամ	
տոմատի մածուկ	կիլոգրամ	
թեյ, սև տերևներով	կիլոգրամ	
կակաո	կիլոգրամ	
կոնֆետ, կարամել	կիլոգրամ	
սոխ	կիլոգրամ	
մանդարին	կիլոգրամ	
բանան	կիլոգրամ	
ջեմեր	կիլոգրամ	
լոբի, հատիկավոր	կիլոգրամ	
պղպեղ աղացած կարմիր	կիլոգրամ	
բլղուր	կիլոգրամ	
սպիտակաձավար	կիլոգրամ	
վարսակի փաթիլներ	կիլոգրամ	
խտացրած կաթ	կիլոգրամ	
համեմունքներ աղացած սև պղպեղ	կիլոգրամ	
վարունգ	կիլոգրամ	

լոլիկ	կիլոգրամ	
պղպեղ	կիլոգրամ	
թխվածքաբլիթներ պրյանիկ	կիլոգրամ	
մրգահյութ, պատրաստի օգտագործման բնական հյութ	լիտր	
մակարոն վերմիշել	կիլոգրամ	
մակարոն լափշա	կիլոգրամ	
մրգային մարմելադ	կիլոգրամ	
չիր սալորաչիր ծիրանաչիր	կիլոգրամ	
կոնֆետ, իրիս	կիլոգրամ	

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____

ազգանուն, անուն

_____

Ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____

ազգանուն, անուն

_____

Ստորագրություն